Հաստատում եմ՝
Գավառի ավագ դպրոցի տնօրեն՝

/Ն. Ղուլոյան/

« 01» սեպտեմբերի 2023 թ

Դասղեկի տարեկան աշխատանքային պլան

Գեղարքունիքի մարզի Գավառի ավագ դպրոց

11 բնագ. դասարան

2023- 2024 ուսումնական տարի

Դասղեկ՝ Մ. Շանոյան

Կրթական-դաստիարակչական աշխատանքների հիմնական ուղղությունները

1.Ներածություն (դասարանի ընդհանուր բնութագիրը)

Դասարանում բոլոր աշակերտները համախմբված են: Դասարանի աշակերտների սոցիալական վիճակը գնահատվում է բավարար: Աշակերտները հաճախում են դպրոց ժամանակին, պատրաստակամ են, նախաձեռնող;

2. Ուսումնա-դաստիարակչական նախատեսվող աշխատանքները ուստարվա ընթացքում

Ուսումնադաստիարակչական աշխատանքների կազմակերպման ընթացքում հաճախակի հետևել դասարանի վարքին և ուսման առաջադիմությանը: Հրավիրել ծնողական ժողովներ, որոնք կնպաստեն աշակերտների կարգապահության, պատասխանատվության և ակտիվության բարձրացմանը: Անհատական աշխատանք կազմակերպել ուսման մեջ թերացող և անկարգապահ սովորողների հետ: Աշակերտների մոտ ձևավորել բազմաբնույթ կարողություններ (կարգապահություն, մաքրություն, անձնական հիգիենայի, համագործակցություն, փոխօգնություն):

3. ՀԱՅԵՑԻ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

3.1 Հոգևոր դաստիարակություն

Այս նպատակով կազմակերպել էքսկուրսիա դեպի մոտակա հոգևոր մշակութային կենտրոններ(հնարավորության դեպքում): Աշակերտների մոտ սերմանել սեր և հարգանք քրիստոնեության նկատմամբ: Նույն նպատակով կատարել պատմական ակնարկ, որը կնպաստի հոգևոր դաստիարակության ձևավորմանը: Կազմակերպել էքսկուրսիաներ եկեղեցիներ, վանքեր:

3.2 Գեղագիտական դաստիարակություն

Գեղագիտական դաստիարակության կարևորագույն խնդիրն է աշակերտների մեջ ձևավորել գեղագիտական ճաշակ, սովորեցնել շրջակա աշխարհի մեջ տեսնել հոգևոր հարստություն, բարություն: Գիտակցական վերաբերմունք ձևավորել մշակույթի համաշխարհային արժեքների նկատմամբ: Դիտել ֆիլմեր, ներկայացումներ, կազմակերպել քննարկումներ

կարդացած գրքերի վերաբերյալ: Այցելել թանգարաններ, տուն-թանգարաններ, պատկերասրահներ, Հայաստանի պատմամշակութային կոթողներ:

3.3 Ռազմահայրենասիրական դաստիարակություն

Ռազմահայրենասիրական դաստիարակությունը սկսվում է դպրոցից: Սովորողների մոտ ձևավորել սեր դեպի հայրենիք, դաստիարակել իրավագիտակից քաղաքացի: Հաշվի առնելով Հայաստանի աշխարհաքաղաքական դիրքի առանձնահատկությունները՝ մեծ ուշադրություն դարձնել աշակերտների ռազմահայրենասիրական ոգու ձևավորմանն ու ամրապնդմանը, տղաներին հոգեբանորեն պատրաստել ծառայության:

3.4 Ֆիզիկական դաստիարակություն

Ֆիզիկական դաստիարակությունը դպրոցում իրականացնում է հետևյալ խնդիրները՝

ա/աշակերտի ներդաշնակ ֆիզիկական զարգացում

բ/աշակերտի մեջ բարոյական բարձր հատկանիշների զարգացում
գ/ֆիզիկական դաստիարակություն

Որպես կարգախոս ունենալ <<Առողջ մարմնում առողջ հոգի բանաձևը>>, առաջնորդվել ֆիզկուլտուրայի և սպորտի նկատմամբ ճիշտ վերաբերմունք ձևավորելու հրամայականով,խրախուսել սպորտով զբաղվողներին և հետևել նրանց հաջողություններին: Անցկացնել զրույցներ սպորտի կարևորության և անհրաժեշտության մասին: Հետևողական լինել ֆիզկուլտուրայի դասերին աշակերտների մասնակցությանը:

3.5 Աշխատանքային դաստիարակություն

Աշխատանքային դաստիարակության միջոցով աշակերտների մոտ ձևավորել հմտություններ և կարողություններ, արժեքային համակարգ, սեր և պատասխանատվություն դեպի աշխատանքը: Կազմել դասարանի հերթապահության գրաֆիկ, ակտիվորեն մասնակցել համադպրոցական և համաքաղաքային շաբաթօրյակներին:

3.6 Բնապահպանական դաստիարակություն

Պետք է կարողանան տեսնել, գնահատել, կանխել իրենց շրջապատում տեղի ունեցող բնապահպանական խախտումները: Տարվա ընթացքում տեղեկանալ ծառատունկի և բնապահպանական ծրագրերի մասին, հնարավորության դեպքում մասնակցել դրանց:

4. Դպրոց-ընտանիք կապը

Աշակերտի դաստիարակության արդյունավետությունը կախված է դպրոց- ընտանիք համագործակցությունից: Դաստիարակությունը հաջողություն է ունենում, եթե ընտանիքի հետ տարվող աշխատանքն ու երեխայի դաստիարակությունը կատարվում է միաժամանակ: Դպրոցը երեխային տալիս է գիտելիքներ և իրականության նկատմամբ դաստիարակում գիտակցական վերաբերմունք: Ընտանիքն էլ իր հերթին ապահովում է կյանքի պրակտիկ փորձը: Երեխաները պետք է հասկանան, որ ընտանիքը հանդիսանում է պետության կորիզը: Ծնողներին հրավիրել դպրոցում կազմակերպվող միջոցառումներին: Յուրաքանչյուր ամսվա 15-ը հայտարարել ծնողական հանդիպման օր: Ուսումնական տարվա ընթացում պլանավորել երեք ծնողական ժողով

5.Մասնագիտական կողմնորոշում

Մասնագիտության ընտրությունը կյանքի ամենապատասխանատու և որոշիչ քայլերից մեկն է: Այդ քայլերով է պայմանվորված հետագա մասնագիտական կյանքի հաջողությունը, աշխատավայրում լիարժեքության, բավարարվածության և ներդաշնակության զարգացումը: Կատարել մասնագիտական ճիշտ ընտրություն՝ նշանակում է ընտրել այնպիսի մասնագիտություն, որն առավելագույնս համապատասխանում է սեփական ընդունակություններին, հետաքրքրություններին և անձնային առանձնահատկություններին: Աշակերիտի մասնագիտական ճիշտ կողմնորոշումը և հետագա ուսումնառության հաջողությունը մեծապես կախված է սովորողի ինքնագնահատականից: Մասնագիտական ճիշտ կողմնորոշման նպատակով աշակերտներին ծանոթացնել տարբեր մասնագիտությունների:

ԿՐԹԱԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1.ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ (ԴԱՍԱՐԱՆԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ)
11-րդ բնագիտական դասարանում սովորում են *17աշակերտներ : Ընդհանուր առմամբ դասարանը համերաշխ է: Դասարանում ձևավորված է աշակերտական կորիզ, որի շուրջ համախմբված են բոլոր երեխաները : Չնայած նրան, որ անցած տարի դասարանը ձևավորվեց և երեխաները եկել էին տարբեր դպրոցներից, շատ շուտ համակերպվեցին նոր միջավայրին: Ընտրված է դասարանի ակտիվը՝ ավագը և աշակերտական խորհուրդը ու նախագահը:*

Ուսումնադաստիարակչական աշխատանքների բովանդակությունը

<u>I կիսամյակ</u>

	Աշխատանքի ուղղություններ *Աշխատանքները կատարվում են շաբաթվա ընթացքում դասղեկի կոմից*
I.	*Աշակերտներին ևս մեկ անգամ ծանոթացնել սովորողի իրավունքներին ու պարտականություններին, դպրոցի ներքին կարգապահական կանոններին:*
II.	*Կազմակերպել զրույց <<Ով էր Յուրա Զախարյանը և ինչու է դասարահը կրում նրա անունը>> թեմայով, այց Եռաբլուր*
III.	*<<Եթե ես լինեի …>> թեմայով բանավեճ: Նպատակն է վեր հանել սովորողի կարողությունները և առանձնահատկությունները:*
IV.	*Ինքնաճանաչում թեմայով զրույց քննարկում*
V.	*<< Ես էլ քեզ նման եմ >> թեմայով զրույցը հնարավորություն կտա ձևավորել հարգանք դիմացինի նկատմամբ: Ուսումնառության խնդիրների քննարկում:*
VI.	*<<Աշակերտների իրավունքները և պարտականությունները դպրոցում>>նպատակն է հստակեցնել աշակերտների մոտ իրենց իրավունքները և պարտականությունները:*
VII.	*<< Ինչ է տալիս մեզ դպրոցը>> թեմայով զրույց:*

VIII.	Կարգապահական խնդիրների քննարկում
IX.	Աշնանային արձակուրդ
X.	<< Պոլիեթիլենի տոպրակներն ու շրջակա միջավայրը>> թեմայով զրույց
XI.	<< Բնական աղետներ >>ներկայացնել բնական աղետների առաջացման պատճառները և դրանց հետևանքները: Ինչպես պաշտպանվել երկրաշարժից:
XII.	<< Ինքնաճանաչում >> թեմայով բանավեճ. նպատակն է ձևավորել ինքնավստահություն, արժևորել սեփական կարողությունները:
XIII.	<< Հանդուրժողականություն >> թեմայով քննարկում, հնարավորություն կտա աշակերտների մոտ ձևավորել բարություն, էմպատիայի հատկանիշներ:
XIV.	<< Էկոլոգիական հիմնահարցեր >> թեմայով քննարկում, ձևավորել գիտելիքներ բնության պահպանության վերաբերյալ:
XV.	Ամանորյա միջոցառման կազմակերպում և անցկացում:
XVI.	1ին կիսամյակի ոփոմամփ

II կիսամյակ

	Աշխատանքի ուղղություններ Աշխատանքները կատարվում են շաբաթվա ընթացքում դասղեկի կոմից
XVII.	Մասնագիտական կողմնորոշում թեմայով զրույց-քննարկում
XVIII.	<<Անտարբերությունն է ծնում չարիքներ>> թեմայով քննարկում
XIX.	<<Ազգային և եկեղեցական տոներ>> թեմայով զրույց նպատակն է հստակեցնել ազգային տոների առանձնահատկությունները և նշանակությունը:
XX.	<<Հայոց բանակի օրը>>, զրույց բանակի ստեղծման թեմայով, էքսկուրսիա դեպի մոտակա զորանոց
XXI.	<<Ճանաչենք մեր քաղաքը>> թեմայով, կազմակերպել էքսկուրսիա Երևան քաղաքում

XXII.	Ինչպես վարվել աղբի հետ, ինչպես այն վերամշակել, օգնել սովորողներին գիտակցել աղբի վերամշակման կարևորությունը
XXIII.	<< Տյարընդառաջի խորհուրդը>> թեմայով զեկուցումներ
XXIV.	Գիրք նվիրելու օր, կազմակերպել նվիրատվություն գրադարանին
XXV.	<<Ինչպես խուսափել վնասակար սովորություններից >> խորագրով զրույց-քննարկում
XXVI.	<<Սովորողների իրավունքներն ու պարտականությունները>> զրույց-քննարկում
XXVII.	Այց պատկերասրահ, ծանոթանալ հայ անվանի նկարիչների ստեղծագործություններին:
XVIII.	<< Քաղաքացիական ինքնություն >> թեմայով զրույց
XXIX.	<<Կոնֆլիկտների հաղթահարում>> թեմայով զրույց-քննարկում
XXX.	Սպորտային խաղեր, սպորտլանդիա զուգահեռ դասարանի աշակերտների մասնակցությամբ, ֆուտբոլային մրցաշարի կազմակերպում:
XXXI.	Զրույց <<Գեղեցկությունը և մայրությունը>> թեմայով: Ծանոթանալ հայ նշանավոր կանանց պատմությանը:Կարգապահական հարցերի քննարկում
XXXII.	<<Երջանկությունն իմ պատկերացմամբ>> զրույց-քննարկում
XXIII.	<<Համացանցի դրական և բացասական կողմները>> զրույց-քննարկում
XXIV.	Ժամանակի կառավարում թեմայով զրույց քննարկում
XXXV.	<<Իմ կարողություններն ու ձեռքբերումները>> թեմայով քննարկում:
XXVI.	Կազմակերպչական հարցեր, կիսամյակի ամփոփում: Փոխադրական քննությունների նախապատրաստում:

ՈՒՍՈՒՄՆԱԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ուսումնական շաբաթներ	Ուսումնադաստիարակչական աշխատանքների բովանդակությունը	Կատարման ժամկետը	Կատարողներ
1.	*Ծանոթացում դպրոցի հետ:*	*Սեպտեմբեր*	*Դասղեկ/ դասարան*
2.	*Դասագրքերի բաշխում:*	*Սեպտեմբեր*	*Դասղեկ/դասարան / գրադարանավ արուհի*
3.	*Գիտելիքի օր:*	*Սեպտեմբերի 1*	*ԱԽ/Տնօրինու թյուն*
4.	*Կազմակերպել հերթապահություն և հետևել մաքրությանը դասասենյակում:*	*Տարվա ընթ.*	Դասղեկ
5.	*Ընտրել ավագ և աշակերտական խորհուրդ:*	*Սեպտեմբեր*	*Դասղեկ/ Դասարան*
6.	*Հավաքել տեղեկություններ աշակերտների մասին:*	Սեպտեմբեր	*Դասղեկ/ Դասարան*
7.	*Հետևել հաճախումներին և առաջադիմությանը , դասագրքերին և այլ պարագաներին :*	*Տարվա ընթ.*	*Դասղեկ*
8.	*Մասնակցյժել դասարանական, համադպրոցական և քաղաքային միջացառումներին:*	*Տարվա ընթ.*	*Տնօրինություն / դասղեկ*
9.	*Կազմակերպել էքսկուրսիաներ, այցելություններ թատրոն , կինո, համերգ:*	*Տարվա ընթ.*	*Դասղեկ/ ծնող*

10.	*Պարբերաբար անցկացնել դասղեկի ժամեր։*	*Տարվա ընթ*	*Դասղեկ*
11.	*Կազմակերպել մարդասիրական օգնություններ (զինվորներին, ծերերին)*	*Կազմակերպել մարդասիրական օգնություններ (զինվորներին, ծերերին)*	*Դասղեկ/ Ծնող/ աշակերտ*
12.	Աշխատել առարկայական ուսուցիչների հետ, անցկացնել դասալսումներ։	Տարվա ընթ.	Դասղեկ
13.	*Կազմակերպել արձակուրդային միջոցառումներ։*	*Տարվա ընթ.*	*Դասղեկ/ ծնող*
14.	*Վարել ծնողական և դասարանական ժողովներ։*	*Տարվա ընթ.*	*Դասղեկ/ ծնող*
15.	Կազմակերպել երեխաների առողջության պահպանման հետ կապված միջոցառումներ։	Ուս։ տարվա ընթացքում	Բուժքույր/ դաս ղեկ/ ծնող
16.	*Ամանորյա միջոցառման կազմակերպում։*	*դեկտեմբեր*	*Դասղեկ/ դասարան*
17.	*1-ին կիսամյակ ամփոփում։*	*Դեկտեմբեր հունվար*	*Դեկտեմբեր հունվար*

Ուսումնական շաբաթներ	*Ուսումնադաստիարակչական աշխատանքների բովանդակությունը*	*Կատարման ժամկետը*	*Կատարողներ*
18.	*Մասնակվել Հայոց բանակին նվիրված միջոցառմանը:*	*հունվար*	*Դասղեկ/ Դասարան*
19.	*Աջակցել օլիմպիադաների և սպորտային մրցումների մասնակցությանը:*	*2-րդ կիսամյակի ընթացքում*	*Դասղեկ/ Դասարան/ ֆիզ. Ուսուցիչ*
20.	*Մասնակցել Կանանց տոնին նվիրված միջոցառմանը:*	*Մարտ*	*Դասղեկ/ Դասարան*
21.	*Կազմակերպել միջդասարանական մրցույթ-խաղեր:*	*Ապրիլ-մայիս*	*Դասղեկ/ Դասարան*
22.	*Այցելություն «Եռաբլուր» պանթեոն:*	*Մայիս*	*Դասղեկ/ Դասարան/Ծնողներ*
23.	*Փոխադրական քննությունների նախապատրաստում և անկացում:*	*Մայիս-հունիս*	*Դասղեկ/ Դասարան/տնօրինություն*
24.	*Դասագրքերի հավաքումհանձնում:*	*Հունիս*	*Դասղեկ/ Դասարան/ գրադարան*
25.	*Տարեերջյան էքսկուրսիա:*	*Հունիս*	*Դասղեկ/ Դասարան/ գրադարան*